

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԻՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 47.12-րդ և 47.13-րդ հոդվածներով՝

*«Հոդված 47.12 Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելուց առաջ և հետո օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ չիրականացնելը*

1. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատումից (աբորտ) առաջ կնոջը հղիության արհեստական ընդհատման հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ անվճար խորհրդատվություն չտրամադրելը կամ խորհրդատվություն տրամադրելու մասին բժշկական փաստաթղթերում գրառումներ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից հինսնապատիկի չափով:

2. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատումից (աբորտ) անմիջապես հետո կնոջը անցանկալի հղիությունը կանխելու միջոցների և (կամ) մեթոդների ընտրության վերաբերյալ անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն չտրամադրելը կամ խորհրդատվություն տրամադրելու մասին բժշկական փաստաթղթերում գրառումներ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից հինսնապատիկի չափով:

3. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատման (աբորտ) բժշկական միջամտությունից անմիջապես առաջ հղի կնոջը հղիության արհեստական ընդհանման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու օրենքով նախատեսված ժամանակահատված չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածով նախատեսված արարքն կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:

*Հողված 47.13 Օրենքով թույլատրված դեպքերում հղիության արհեստական ընդհատման (աբորտ) իրականացնելիս օրենքով նախատեսված պարտադիր փաստաթղթերը չստանալը*

1. Օրենքով թույլատրված հղիության արհեստական ընդհատման (աբորտ) դեպքում բժշկի կողմից հղի կնոջ կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը կամ գրավոր համաձայնությունը չստանալը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

2. Բժշկի կողմից օրենքով նախատեսված դեպքում հղիության արհեստական ընդհատումը առանց բժշկական հանձնաժողովի որոշման իրականացնելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ինսունապատիկից հարյուրապատիկի չափով:

3. Սույն հոդվածով նախատեսված արարքն կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 244.14 հոդվածում «47.8» թվից հետո լրացնել «,47.12, 47.13» թվերը:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի 5-րդ կետի պահանջներից, ներառված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի N111 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում և պայմանավորված է Հայաստանի

Հանրապետությունում հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման, ինչպես նաև հղիության արհեստական ընդհատումների ոլորտը կարգավորող օրենսդրության առկա բացերը լրացնելու անհրաժեշտությամբ:

## **2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

1) ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տվյալներով ծնունդների բնականոն սեռային հարաբերակցությունն է համարվում 102-106 տղա յուրաքանչյուր 100 աղջիկ նորածինների հաշվով: Մինչդեռ «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն» հետազոտության տվյալների համաձայն՝ Հայաստանում այս հարաբերակցությունը էականորեն խախտված է, ինչը ի հայտ է եկել դեռևս 1990-ական թվականներին: Նման անհամամասնության ձևավորումը պայմանավորված է ինչպես հայ հասարակության մեջ տղա երեխային նախապատվություն տալու, ընտանիքում և հասարակությունում տղայի դերի և նշանակության մասին ձևավորված պատկերացումների հետ, այնպես էլ բժշկական տեխնոլոգիաների զարգացման արդյունքում ապագա երեխայի սեռը պարզելու հնարավորության ստեղծմամբ: Ծնունդների բնականոն համարվող սեռային հարաբերակցության շեղումները ներկայում ՀՀ-ում վտանգավոր սահմանագծի են հասել և դարձել լուրջ ժողովրդագրական սպառնալիք:

Այսպես. 2011 թվականի դրությամբ այն կազմել է 114 տղա նորածին՝ յուրաքանչյուր 100 աղջիկ նորածինների հաշվով: Այս ցուցանիշով Հայաստանը հայտնվել է սեռով պայմանավորված հղիության ընդհատման վատագույն ցուցանիշներ ունեցող երկրների շարքում (Չինաստան, Հնդկաստան, Ադրբեջան, Ալբանիա): Ավելին, երրորդ և հաջորդ երեխաների դեպքում այդ ցուցանիշը շատ ավելի բարձր է (2008-2012թթ. միջին ցուցանիշը կազմել է՝ 164 տղա 100 աղջկա դիմաց): Խնդիրը հատկապես արտահայտված է մարզերում (Գեղարքունիք, Արագածոտն, Արմավիր): Ծնունդների նման սեռային հարաբերակցության հետագա շարունակման դեպքում կանխատեսվում է գենդերային խզում, որի արդյունքում մինչև 2060 թվականը չեն ծնվի 92932 աղջիկներ, ինչն էլ իր հերթին կբերի ծնունդների թվի առավել կրճատման, և որպես հետևանք բնակչության թվաքանակի նվազման:

Այսպիսով, սեռերի ծնունդների հարաբերակցության վերը ներկայացված պատկերի պահպանումը լուրջ ժողովրդակագրական խնդիր է վերածվել: Նման պատկերի ձևավորումը բացի ժողովրդագրական սպառնալիքներից, կարող է առաջացնել նաև հասարակական բնույթի բազմաթիվ այլ խնդիրներ, որպիսիք են սեռական անձեռմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները, թրաֆիկինգը, միայնակ տղամարդկանց թվի աճը և դրանից բխող այլ հետևանքներ: 2013թ. հունվարին Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլ Մույժնիեկսը հանդես եկավ հայտարարությամբ, որում անդրադարձ էր կատարվել Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Կոսովոյում, Ալբանիայում և արևելաեվրոպական այլ երկրներում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման հիմնախնդիրներին և մասնավորապես արձանագրելով, որ «Ինչպես Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն (CEDAW), այնպես էլ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կոչ է արել կառավարություններին՝ ընդունելու սեռով պայմանավորված հղիության արհեստական

ընդհատումն արգելելու վերաբերյալ ազգային օրենսդրություն»։ Ներկա փուլում սեռով պայմանավորված հղիության ընդհատումը արգելող հստակ օրենսդրական կարգավորումներ ՀՀ-ում չի գործում։ Հարցի հետագա չկարգավորումը ՀՀ համար լի է ժողովրդագրական սպառնալիքներով և կանանց նկատմամբ խտրականության դրսևորման խորացմամբ։ Ներկայում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը արգելող օրենսդրություն ունեն ԱՄՆ ութ նահանգներ (Հյուսիսային Դակոթա, Հարավային Դակոթա, Օկլահոմա, Իլինոյս, Արիզոնա, Փենսիլվանիա, Կանզաս, Հյուսիսային Կարոլինա), Զինաստանը, Կոսովոն, Վիետնամը, Նեպալը ([http://napawf.org/wp-content/uploads/2014/05/FINAL\\_Replacing-Myth-with-Facts-Sex-Selective-Abortion-Laws-in-the-United-States-copy.pdf](http://napawf.org/wp-content/uploads/2014/05/FINAL_Replacing-Myth-with-Facts-Sex-Selective-Abortion-Laws-in-the-United-States-copy.pdf)):

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով հղիության արհեստական ընդհատման հետ կապված այլ կարգավորումների վերանայման անհրաժեշտությունը, նախագծով առաջարկվում է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը ամբողջովին վերանայել՝ հստակ ամրագրելով սեռով պայմանավորված աբորտ կատարելու արգելքը, որի խախտման դեպքում արարքը կդիտարկվի որպես ապօրինի կատարված և կհանգեցի օրենքով նախատեսված պատասխանատվությանը։

Բացի այդ, գործող օրենսդրության մեջ առկա են խնդիրներ, որոնց կարգավորումն անհրաժեշտ է հղիության արհեստական ընդհատման գործընթացում առկա արձանագրված բացերը վերացնելու համար։ Մասնավորապես՝

ա. սահմանված չեն հղիության արհեստական ընդհատման չիմնավորված դեպքերը կանխարգելելու նպատակով կնոջը վերջնական որոշում կայացնելու ժամանակահատված տալու հետ կապված հարցերը, ինչի տրամադրումը մեծապես կնպաստի կնոջ կողմից հիմնավորված որոշում կայացնելուն։ Մինչդեռ ԱՄՆ և եվրոպական մի շարք երկրների օրենսդրությամբ բժիշկները պարտավոր են հղիության չիմնավորված ընդհատումների կանխարգելման նպատակով իրենց դիմած կնոջը տրամադրել վերջնական որոշում կայացնելու ժամանակահատված, այսպես կոչված waiting period: Նման պահանջի սահմանումը հիմնավորվում է կնոջ կողմից հապշտապ, չկշռադատված որոշում կայացնելուց զերծ պահելու նկատառումներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ միայն հղիության և ապագա երեխայի մասին ամբողջական տեղեկատվության տիրապետողը կարող է նման պատասխանատու որոշում կայացնել։ Այս մոտեցման օգտին է խոսում նաև հղիության արհեստական ընդհատման մտադրության փոփոխման բարձր հավանականությունը, ինչը դրանց թիվը կրճատելու լավ գործիք կարող է հանդիսանալ։ Տրամադրվող ժամանակահատվածը երկրից երկիր կամ նույնիսկ նահանգից նահանգ (ԱՄՆ) չափազանց տարբեր է։ Այսպես ԳԴՀ-ում 3 օր է, Նիդեռլանդներում 5 օր (<http://www.weneedalaw.ca/resources/international-law>), Իտալիայում, Ֆրանսիայում՝ 7 օր, Բելգիայում՝ 6 օր (<http://www.gynmed.at/sites/default/files/images/pdf/EntreNous.pdf>), ԱՄՆ-ում 18 ժամից մինչև 3 օր, ([http://www.guttmacher.org/statecenter/spibs/spib\\_OAL.pdf](http://www.guttmacher.org/statecenter/spibs/spib_OAL.pdf)),

բ. սահմանված չեն կնոջ հղիության արհեստական ընդհատման դիմելու, դրան համաձայնություն տալու գրավոր ընթացակարգեր, ինչը օրենսդրական պահանջների

պահպանման և դրանց վերահսկողության գործիք է հանդիսանում: Նման մոտեցումներ ամրագրված են Սլովակիայի (<http://cyber.law.harvard.edu/population/abortion/Slovakia.abo.html>), Չեխիայի, Լեհաստանի, Իսպանիայի, Շվեյցարիայի օրենսդրություններով (<http://www.loc.gov/law/help/abortion-legislation/europe.php#belgium>):

դ. Չնայած ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1116-Ն որոշմամբ սահմանված են հղիության արհեստական ընդհատման կարգը, բժշկական, սոցիալական ցուցումները, հակացուցումները, անհրաժեշտ հետազոտությունների ցանկերը, սակայն օրենքով նման լիազորություն կառավարությանը տրված չէ: Նկատի ունենալով, որ հիշյալ կարգն ու պահանջները առավել բժշկական բնույթ ունեն և բժշկագիտության զարգացմանն զուգընթաց անընդհատ փոփոխվում են, առավել նպատակահարմար է դրանք ընդունելու լիազորությունը վերապահել ՀՀ առողջապահության նախարարին:

ե. Ներկայում հղիության արհեստական ապօրինի ընդհատման համար ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածով սահմանված է պատասխանատվություն, սակայն օրինական ընդհատման ընթացակարգերի պահանջների խախտման համար պատասխանատվություն սահմանված չէ:

### **3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

Ներկայում սեռով պայմանավորված հղիության ընդհատման վերաբերյալ պետական քաղաքականությունը առավելապես հիմնված է քաղաքացիական սեկտորի հետ միասին հասարակության իրազեկմանը, աղջիկների և տղաների հավասար արժեքորման խթանմանը, ձևավորված կարծրատիպերը կոտրելուն: Հղիության արհեստական ընդհատումը ապօրինաբար կատարել քրեականացված է և առաջացնում է պատասխանատվություն տուգանքից մինչև ազատազրկում: Հղիության արհեստական ընդհատման գործընթացին ներկայացվող պահանջների խախտման համար վարչական պատասխանատվություն սահմանված չէ:

### **4. Կարգավորման նպատակը և բնույթը**

1) «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

Նախագծով առաջարկվում է ամբողջովին նոր խմբագրությամբ շարադրել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը, նկատի ունենալով առկա կարգավորումների բացերը և հակասությունները.

ա. օրենսդրորեն արգելել սեռով պայմանավորված հղիության ընդհատումները (նման դրույթ ներկայումս բացակայում է ՀՀ օրենսդրության մեջ),

բ. սահմանել հղիության արհեստական ընդհատումների կրճատմանն ուղղված օրենսդրական լրացուցիչ կարգավորումներ և մեխանիզմներ (կնոջը հղիության արհեստական ընդհատման համար վերջնական որոշման կայացման համար պարտադիր ժամանակահատված, հղիության արհեստական ընդհատման գործընթացների` ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության և վերահսկելիության ապահովման

նպատակով դիմելու և համաձայնության գրավոր կարգով ներկայացնելու պահանջների սահմանում ):

գ. ՀՀ կառավարությանը վերապահել հղիության արհեստական ընդհատման բժշկական, սոցիալական ցուցումները, հակացուցումները, անհրաժեշտ հետազոտությունների ցանկերը հաստատելու, հղիության արհեստական ընդհատման գործընթացում ներդրվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու լիազորություն:

2) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

Նախագծի ընդունումը պայմանավորված է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացմամբ և նպատակ ունի օրենքով թույլատրվող հղիության արհեստական ընդհատման գործընթացում սահմանված պահանջների խախտման դեպքերի համար սահմանել վարչական պատասխանատվություն: Պատասխանատվության սահմանման նպատակն է ամրագրված պահանջների կատարումը ապահովելը, ընթացակարգային խախտումները կանխարգելելը:

#### **5. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Ըստ ներկայացուցչական ազգային հետազոտության տվյալների, ՀՀ-ում 2010 թվականին գրանցված հղիությունների 29% ավարտվել են հղիության արհեստական ընդհատումներով, որոնցից մոտ 4,2% եղել են պայմանավորված երեխայի սեռով: Ներկայացված նախագծով նախատեսվում է սեռով պայմանավորված հղիության ընդհատումների արգելքը օրենքով ամրագրելու, ինչպես նաև այլ օրենսդրական լրացուցիչ կարգավորումների և մեխանիզմների սահմանմամբ և դրանց կիրառմամբ կանխարգելել և էականորեն հղիության չհիմնավորված արհեստական ընդհատումները, ինչի արդյունքում նախատեսվում է բարելավել ոլորտում գրանցված ցուցանիշները՝ օրենսդրական սահմանափակումների միջոցները զուգակցելով հղիության արհեստական ընդհատման հետևանքների վերաբերյալ կանանց իրազեկվածության մակարդակի բարձրացման, սեռով պայմանավորված խտրական վերաբերմունքի նվազեցմանը և վերացմանը ուղղված միջոցառումների իրականացման հետ:

#### **6. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Իրավական ակտի նախագիծը մշակել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության իրավաբանական վարչությունը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ**

«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
	1	2	3
1.	ՀՀ կառավարություն	<p>1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածով փոփոխվող 10-րդ հոդվածում՝</p> <p>1) 4-րդ մասի «22-րդ շաբաթը» բառերը փոխարինել «12-րդ շաբաթը» բառերով,</p> <p>2) 7-րդ մասում «անցանկալի հղիությունից պաշտպանվելու միջոցների» բառերը փոխարինել «անցանկալի հղիությունը կանխելու միջոցներ և (կամ) մեթոդներ» բառերով՝ հիմք ընդունելով գործող օրենքի կարգավորումները, նույն ձևակերպումը ամրագրել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի</p>	<p>Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>

		<p>47.12 հողվածի 2-րդ մասում:</p> <p>2. Փոփոխել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հողվածների համարակալումը՝ նկատի ունենալով ս.թ մայիսի 17-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքը:</p>	<p>Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>
--	--	---	--